ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2023թվականի N 55-Ա

ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Արտաշես Թումանյանի մուտք՝ 09.03.2023թ. թիվ101/ դիմումը՝
Որոշում եմ.

1. Բավարարել Արտաշես Թումանյանի դիմումը և ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Դսեղ 17-րդ փողոց, թիվ 11 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող /վկ. 20022023-06-0027/ հողամասում ինքնակամ կառուցված 59,6քմ մակերեսով անավարտ շինության քանդման աշխատանքների կատարման համար տալ քանդման թույլտվություն:

2. Աշխատակազմի քաղաքաշինության ոլորտի մասնագետին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

3. Համայնքապետարանի բյուջե վճարել 5000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. մարտի 10
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՐՏԻ 2023թվականի N 56-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԻՆՋ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, 10.06.2008թ.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ -117-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ,հիմք ընդունելով Քարինջ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 30 մայիսի 1991թ. N 2 արձանագրության քաղվածքները, <<ՏՍ-ՌԻԷԼԹԻ>> ՍՊԸ անշարժ գույքի գործակալության կողմից տրված հողամասերի և շինությունների հատակագծերը, ժառանգության իրավունքի վկայագրերը՝ գործ N 47 (սեղանամատյան՝ 696) և Քարինջ գյուղի բնակիչ Սարգիս Անուշավանի Մաղաքյանի /մուտք՝ 01.03.2023թ. թիվ 92/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Սարգիս Անուշավանի Մաղաքյանի /ծնված՝ 20.03.1954թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք,գյուղ Քարինջ 06-110-0009-0023 ծածկագրում գտնվող 1950թ. կառուցված 189,1 քմ մակերեսով բնակելի տան, 46.1 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբի և 0,10364 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:
2.Վերականգնել և ճանաչել Սարգիս Անուշավանի Մաղաքյանի (20.03.1954թ) սեփականության իրավունքը Թումանյան համայնք,գյուղ Քարինջ,փողոց թիվ հասցեում 06-110-0010-0003 ծածկագրում գտնվող 0.07952 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:
3. Վերականգնել և ճանաչել Սարգիս Անուշավանի Մաղաքյանի (0.03.1954թ) սեփականության իրավունքը Թումանյան համայնք,գյուղ Քարինջ,փողոց թիվ հասցեում 06-110-0009-0027 ծածկագրում գտնվող 0.0999 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:
4. 06-110-0009-0023 ծածկագրում գտնվող բնակելի տանը և զբաղեցրած հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Քարինջ, Միտյա Մկրտումյան փողոց 41 բնակելի տուն:

5. 06-110-0010-0003 ծածկագրում գտնվող անասնաշենքին և զբաղեցրած հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք,գ.Քարինջ, Միտյա Մկրտումյան փողոց, 65 հողամաս:

6. 06-110-0009-0027 ծածկագրում գտնվող տնամերձ հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք,գ. Քարինջ, Ռուբեն Սևակ փողոց 6 հողամաս:

7. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:

8.Սույն որոշման 4-րդ,5-րդ,6-րդ կետերով տրամադրված հասցեները ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. մարտի 13
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՐՏԻ 2023թվականի N 57-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով քաղաքացի Օֆելյա Արշակի Վարդանյանի դիմումը,անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 21112022-06-0059 վկայականը,տրված՝ 21.11.2022թ. անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 27122022 վկայականը,տրված է 27.12.2022թ. և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1. Օֆելյա Արշակի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող, ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք,գյուղ Դսեղ, 12-րդ փողոց, 27 (ծած.06-035-0106-0008) հողամասը,մակերեսի չափը 0.2 հա և ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, 12-րդ փողոց, 3/5 (ծած.06-035-0106-0010) հողամասը,մակերեսի չափը 1,140524 հա երկու առանձին միավորների անշարժ գույքերը միավորել, ըստ հատակագծերի:
2.Միավորված 1,340524 հա մակերեսով անշարժ գույքին տրամասդրել նոր << ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Դսեղ,12-րդ փողոց,27 հողամաս>> հասցեն:
3.Սույն որոշման 2-րդ կետերով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. մարտի 13
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՐՏԻ 2023թվականի N 58-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>>N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 07.09.2022թ.թիվ 120 դրական եզրակացությունը, Թումանյան համայնքի ավագանու 26.01.2023թ.թիվ 4-Ա որոշումը և <<Բարձրից>> ՍՊԸ-ի կողմից վճարված կադաստրային արժեքների տարբերության համար բանկ վճարված անդորրագիրը՝
Որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում <<Բարձրից>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 06-035-0130-0005 ծածկագրի 0.4535 հա մակերեսով խոտհարքը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության:

2.<<Բարձրից>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ Թումանյան համայնք գյուղ Դսեղ բնակավայրերի հողերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասին՝ (ծած.՝06-035-0130-

0005) մակերեսի չափը՝ 0.4535 հա տրամադրել նոր փոստային (ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք,գ.Դսեղ, 6-րդ փողոց, հողամաս 90) հասցե:

3.Սույն որոշում ուժի մեջ մտնելուց հետո՝ օրենքով սահմանված կարգով, ժամկետներում կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

4. Նշված հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման,կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը և փոփոխված նշանակությամբ համապատասխան օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

5. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

7.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 06.12.2022թ. N 325-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. մարտի 14
ք.Թումանյան